

# Արեւելեան

## Պատրիարք

Արեւելեան Փող կը հրատարակուի անկէն որ :

Տարեկան գինն է Պօլսոյ համար կանխիկ 1 Օսմանեան ոսկի . իսկ դաւաճող համար բօսթայի ծախքը մեր վրայ ըլլալով 7 արծաթ մէճիրտ : Մէկ օրինակը 10 փարայ է :

Ծանուցմանց տողն առաջին անգամի համար 2 դրշ . երկրորդ անգամի համար 1 դրշ . և ուրիշ անգամներու համար մասնաւոր սակարկութիւն կը ըլլնի :

Որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէն-Խմբագիրն Վ. Պօլսոյ Քիւրքէճի խանի վարի յարկ թիւ 26 Արեւելեան Փողոյ տպագրատունը :

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

#### ՀՆԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վաշինկիթընի մէջ սոյն պատերազմին պատճառաւ տիրող երկիւղն բոլորովին անտեղի չէ :

Մօռօքները Միացեալ-Նահանգաց զօրքը ճեղքեր անցեր և դաշտերը դըրաւեր են : Արդարեւ անկարելի է ենթադրել որ վաթսուն եօթանասուն հոգի որչափ որ ալ յանդուգն և գիւմագրաւ ըլլան , առանց ինքզինքնին սպաննել որոշելու , կամաւ ինքզինքնին հաղթի մը մէջ փակելին . եթէ ժամանակին անկէջ դուրս ելլել կարենալու ապահով չըլլային : Անոնք չէին ուղեր վնասուիլ առանց իրենց նահանջը Աւամերիկայի զօրաց սուղի նստեցնելու , ուստի իրենց անմատոյց ժայռերուն ետին՝ զօրաց սպասեցին , որ առանց անոնց հարուածոց ենթարկուելու ապահովապէս զանոնք հարուածեն :

Մօռօքները տաներիւքի չափ ճերմակ սպաննած կամ վիրաւորած են և իրենց կողմէն հաւանականաբար չորս հինգ հոգի սպաննուած է , ասոնք ալ ոչ թէ Միացեալ-Նահանգաց զօրքերէն , այլ անոնց նիզակակից հնդիկներէն սպաննուած են : Իրենց գլխաւորներէն մին , Սքոնչին անուամբ , ժողզօրապետին թողած քարայրին մէջ վիրաւոր գտնուած է , բայց Սքոնավ գերի մը ըսաւ թէ այդ վիրաւորը հրագէտի հարուածով մը զարնուած էր , զոր խաղաղութեան յանձնաժողովոյ անդամ Մաշամը իւր վրայ պարպեր էր , Լալայի դաշտերուն յարձակմանէն ա-

ռաջ եղած բանակցութեանց խափանուած ատեն զինքը հալածելով : Չգիտցուի թէ իր սպասանած քարայրին մէջ ինչպէս մեռած է , հոն մեռած գտնուած է , եթէ իւր մազը բերող զինուորը զինքն սպաննած է :

Կերեւի թէ Մօռօքներու փախտեան վրայ առաջին անգամ եղած կատակածը՝ Էօթէն Էօլէն անուամբ ճերմակ սայլորդի մը գիւղէն պատճառած է , որ Լալայի դաշտերէն մղոնի մը չափ հեռու անդ մը գտնուեցաւ , ուսկից կուգար այս սայլորդը իրէքա եղող բանակէն վերադառնալով : Ասկից սակը մտածաի թէ այս երիտասարդը դժբաղդաբար ասոնց ճամբուն վրայ գտնուելով անոնք զինքը սպաննած էին , սրպէս զի ձիերը գողնան և չի թողուն որ ըսի տանի :

Անձ մը , որուն անունը չեն զուրցեր և Սան Ֆրանչիսքոյէն եկած պաշտօնական գրութիւն մը կատարեալ վտահուութեան արժանի մէկը կը համարէ զայն , կը հաւատայ թէ արեւելեան հարաւային կողմը , այսինքն այն ուղղութեան մէջ , ուսկից կը կարծուի թէ Մօռօքները փախեր են , խիտ բնդարձակ քարայր մը կայ , Լալայի դաշտերէն ալ աւելի անմատչելի և ուռմբերու աւելի գիւմացող , ուր գրեթէ սոսոյգ է որ Մօռօքներն ապաստանած ըլլան :

Եթէ այսպէս է՝ կը կարծուի որ այս քարայրը երկու յատուկ և կամ ծածուկ ելք ունի միայն իրենց ծանօթ , ուսկից պիտի կրնան դուրս ելնել , և թերեւս հոն կամ ուրիշ ապաստանարան մը քաջուած պիտի ըլ-

լան իրենց նահանջին առաջին օրը : Բայց զերմանելու համար գիշեր ատեն դուրս պիտի ելնեն մինչեւ որ անմատոյց լեռներ կարենան քաշուիլ :

Ինչ որ ալ ըլլայ , երկրին մէջ մեծ տագնապ կայ և իւրաքանչիւր գունդ կը կարծէ այսուհետեւ թէ ամէն վայրկեան Մօռօքներէն յարձակում կրելու , կողպատուելու . կործանուելու և մնրթեզերմ ըլլալու վտանգին ենթարկուած է : Ժիլլիմ զօրապետը ամեն կողմ գէտեր խրկած է ագարակի տէրերուն ղեկուցանելու որ զգոյշ կենան , բայց այս գէտերն ալ չեն համարձակիր գիւմագրաւելու , վախնալով որ չըլլայ թէ Հօլէյի վիճակին ենթարկուին : Սքօֆիէլ զօրապետն ալ շարունակ օգնական զօրք կը խրկէ Ժիլլէմ զօրապետին :

Կերեւի թէ կը վախցուի որ Մօռօքներու անպատիժ մնալը ուրիշ շատ մը ցեղերու ալ համարձակութիւն չիտայ . որք թէպէտ և վախերնուն հանդարտ կը կենան , բայց զգոյշ են թէ մի գուցէ ընդհանուր ապաստանութեան մը նշանտուութիւնն ըլլայ Քալիֆորնիոյ հիւսիսային և օրէկոնի հարաւային գօտիներուն մէջ : Այսպիսի ապրտամբութեան մը խիտ ծանր բան մը չպիտի ըլլայ , որովհետեւ այս գօտւոյն տակ եղող հնդիկներն քսան հազարէ աւելի պատերազմող կրնան յարուցանալ , և մէջերնին համաձայնելին լոկ բաւական է զանոնք մէկմէկու մտեցնել ընդհանուր պատերազմի մը համար :

Հնդկական գործոց գործակատարին տեղեկագիրը՝ երկրին և իւր վի-



ճակաց մէջ տնտեսած հնդկաց հետեւեալ թուահամարը կուտայ :

- Քաղիֆօրնի . . . . . 22,000
- Օրէկօն . . . . . 12,000
- Վաչինկթօնի վիճակները . . 14,000
- Խոտհօ . . . . . 5,000
- Մօնթանա . . . . . 32,412
- Իւթա . . . . . 11,300

Եթէ սակաւաթիւ Մօտօքները՝ իրենց դէմ խրկուած համեմատարար քաղմածիւ զօրաց այքը վախօցուցին, և անոնց դիմագրաւեցին, ասկից կըրնայ մտածուիլ թէ՛ որչափ սուղի պիտի նստի կառավարութեան, եթէ իրեն դէմ հակառակութիւն մը ելնէ, որուն պիտի մասնակցին բոլոր այս ժողովուրդները. կրօնական մոլեռանդութենէ նոր ուժ առնելով : Կը յուսանք որ այսպիսի տագնապացից շիտիթութեանց հանդիսատես չի պիտի ըլլանք : Բաւական չի՞նք ամբողջ գաղթականութեանց գլուխն եկած դժբաղդութիւնները : Երկաթուղեաց աղէտները, և աւաղի վրայ շինուած կամուրջները՝ որ փոթորիկը կառնէ կը տանի, և ասոնցմէ զատ ցեղերու սրտերազմը՝ որ մեծ է բոլորքելու հարաւային կողմը :

Սան Ֆրանչիսքօյէն դահայտ զիւր մը հասաւ Արաչներու վրայօք, որք Քրօւք զօրտպեալին դէմ այնչափ դժուարութիւններ յարուցանելէ վերջը ալ հիմայ հպատակեր են : Սան Ֆրանչիսքօյէն ապրիլ 20 ամսամուտով եկած պաշտօնական գրութիւն մը այս իրաց ելքը կը պատէ հետեւեալ կերպով :

Վերտի պատերազմը դաշտը խաղաղութեան վրայօք խորհրդակցելու համար եղած ժողովոյն արդիւնքը՝ Արաչներու երկու խիստ վտանգաւոր գունդերու առանց պայմանի անձնատուր ըլլալը եղաւ : Այս ազգին քանի մը դատերը, որք քսան տարիէ ի վեր կառավարութեան կը դիմագրուէին, բոլորովին վատթարանալէ վերջը հաշտութիւն եղաւ : Իրենց պատերազմողներուն երկու հարիւրէն աւելին վերջին պատերազմին մէջ մեռան : Արաչներու զօրագլուխը թօնթօ՛ 150 մարդաց կնիկներու և աղաց հեռ ժողովոյն ներկայ էր և պատերազմօք բանակցութեանց սկսուելէ առաջ իրենց ղէնքերը յանձնեցին :

Արաչներու դիւաւորները առաջ խօսելու սկսան և խմանալով իրենց կատարեալ պարտութիւնը հաշտութիւն խնդրելու փափաքնին յայտնեցին : Քրօւք զօրտպեալը համառօտ կերպով պատասխանեց : Գլխաւորները խոստացան յայտարարութիւն մը խրկել բոլոր

մեւ ղէնք կրօյ Հնդկաց որ գան հրպատակին : Կառավարութիւնը միւր ունի անոնց հետ լաւ վարուելու և զանոնք այնպիսի վիճակի մը մէջ դնելու, որ անձերնին ապահովի, և անոնց տրուած խոստումներն հաւատարմարար կատարելու :

Ասի ճերմակներուն և Հնդկաց մէջ նորածեւ յարարերութիւն մը պիտի ըլլայ, միայն իրենց հետ այսկերպ վարուելու փորձն եղած չէր, և թերեւս սկիզբէն այսպէս պէտք էր բնել :

Քրօւք Տէնթիւն Իւնթի

### ՆԵՐՔԻՆ

Երէկ արտաքին գործոց պաշտօնեայ Վսեմ. Բաշիտ փաշա սպարապետի դուռը երթալով, Բարձր. Ետուտի Իզգէտովն Էֆէնտի իւր շնորհակալիքը մտայց : Վերջէն արտաքին գործոց պաշտօնատուներ երթալով Անգղիոյ գեապան Սըր Հէնրի Էլիօթի և Պեղծիոյ գեապան Կրիստօֆի կամին այցելութիւններն ընդունեց :

— Ս. Բէդերապուրիէն եկած պաշտօնական հեռագրալուր մը կը ծանուցանէ թէ Ս. Բեդերապուրի օսմանեան գեապան Վսեմ. Քեամի փաշա հոն հասնելով իւր պաշտօնին սկսեր է :

— Երէկ առաւօտ ծովային գործոց պաշտօնեայ Բիզա փաշա սպարապետ երթալով Վեհ. Սուլթանը իւր պաշտօնին վերաբերեալ տանակարն որ խընդրաց վրայօք խօսակցեցու իրեն հետ :

— Սէլանիկի ընդհանուր կառավարիչ Ա. քիֆ փաշա, Բրէզիլի կառավարիչ Հիւնի փաշա և Եանեսայի կառավարիչ Խամայիլ փաշա, այս կիսակէ կայսերական պալատը դադար վեհ. Սուլթանին հրաժեշտի ողջին ապուր համար : Մակայի վեհ. Սուլթանը իւր Ալէմ-տաղիի դեղեակը դադար ըլլալով այն օրը, երկու շաբթի օր ներկայացան և իրենց շնորհակալիքը մատուցին Նորին վեհափառութեան : Հատիքայի բնածին նայելով, որքաթ օր պիտի մեկնին եղեր քաղաքէս իրենց պաշտօնատեղին երթալու համար :

— Սամիհ քաշայ, որ Ալիբիկէի Տըրիպօլայի ընդհանուր կառավարիչ անուանած էր, Տրապիզօնի ճամբով, Օսմանեան Տրապիզօն շողենաւով մայրաքաղաքս հասաւ :

— Պատերազմական գործոց պաշտօնեայն, քաղաքային հանդերձ հազնին արգիլեց զինուորականաց :

— Տրապիզօնի նախկին ընդհանուր

կառավարիչ Ահմէտ Ռաշիտ քաշայ այս կիւրակէ մայրաքաղաքս հասաւ :

— Զմիւռնիայէն Ղէվընտ Հէրընի գրուած նամակէ մը կիմանալք Քէանցեալ կիւրակէ օր արտաքոյ կարգատօնի մի համար նոյն քաղաքի Հայ բնակիչք ըստ վաղեմի սովորութեան տարեգարձ մի կատարած են Պրիկոչուած լեւան բլրակին վերայ, ներկայութեան հաղարէ աւելի հանդիսականաց, և ուր անդորրութիւն վրդովող պարագայ մի տեղի չէ ունեցած :

— Զմիւռնիոյ Բրուտա լրագիրը վսեմ. Բաշիտ քաշայի արտաքին գործոց պաշտօնեայ անուանելուն վրայ այսպէս կը խօսի :

Մեր քաղքին ժողովուրդը արտաքին գործոց պաշտօնէին ձեռնհասութիւնը ճանչցած էր արդէն, երկու տարի մեր քաղքին մէջ կառավարութիւն ըրած ատեն, որ Նորին Վսեմութիւնը ընտիր յիշատակներ թողուցած է : Ուստի ժողովուրդը մեծ հրճուածք զգաց իւր նախկին կառավարչին այն մեծ պաշտօնին կոչուելուն վրայ : զոր իրեն յանձնած է մեր յոգստափառ կայսրը :

— Հագոյից լրագիրը, որ խաբանուած էր, երէկ նորէն սխալ հարատարակուիլ :

— Թայիֆի նաւը Իզմիտի նաւարարանին մէջ նոր շինուած Փրդաթիւնը ետեւը կատարելով մինչեւ հոս նաւարարը բերաւ, որ պիտի դրահաւորուի :

— Սօֆիայի երկաթուղոյն գծին շինութիւնն կայսերական հրամանատանձնող յանձնաժողովը անցեալ օրեր այս քաղաքը հասեր և շինութեանց հարկաւոր եղած նիւթերը մատակարարելէն վերջը, շինութիւնն սկսիլ տուեր է հանդիսի ի ներկայ յս թեան շատ մը պաշտօնատարներու և այս առթիւ շատ ոչխարներ մորթուեր են :

— Պարսից գեապանատունէն երած և տոնկական լրագրաց մէջ հրատարակուած պաշտօնական ազդարարութիւն մը Պարսից կարգիչէ գինետուններն յաճախելու : Գինովութեան ատեն բռնուող պարսիկները առաջին անգամ խոտիւ պիտի յանդիմանուին, բայց երկրորդ անգամ բռնուելուն պիտի աքսորուին :

— Բարատիս շոգենաւը, որ Պ. Թէթթոտորիտիին էր, կայսերական նաւային գործոց պաշտօնատունէն դնուեցաւ, և պաշտօնէից՝ զբօսանաց



համար բրած ճամբորդութեանց պիտի յատկանայ :

— Փոխ-գնդապետ Հիւսէյին պէյ, որ Հերաքլէյի հանքային ամախնե-րու տեսուչ կարգուած և հոն գացած էր իւր պաշտօնն սկսելու համար, ծովային դործոց պաշտօնէն ետ կան-չըրուեր է : Կերեւայ թէ այս հանքե-րուն վերաբերեալ ուրիշ հրահանգներ ալ պիտի ընդունի :

— Բոլոր օսմանեան հպատակները, որ մինչև հիմայ առանց անցադրի Ռուսաստան կը ճանապարհորդէին, իբրև դատարկապորտ բանտ կը դըր-ուէին կամ Սիպերիա կաքորուէին :

Վերջին օրերս Ռուսիոյ կայսերա-կան կառավարութեան և Բ. Դրան մէջ համաձայնութեամբ օրոշուած է թէ ասկից վերջը օրինաւոր անցադիր չունեցող Օսմանեան հպատակք առ-ժամանակեայ կերպով պիտի ձերբա-կալուին և Օսմանեան գետափունին և կամ տեղւոյն հիւպատոսին խնայ պի-տի տրուի, որպէս զի քննութիւններ ընեն : Եթէ խնդրուած տեղեկութիւնք դո՛ւ հասցուցիչ ըլլան, ձերբակալուող ան-անհատներն ազատ պիտի թողուին :

— Նաւային գործոց խորհրդոյ ան-դամ, Գնդապետ Էթհէմ պէյ, մօտ օրէն քաղաքէս մեկնելով Օսմանեան Արշիպիզադասի և Սիրիայի զանազան նաւահանգիստներն պիտի երթայ : Հոն եղող պատերազմական նաւերն աչքէ անցնելու համար :

— Բեթղէմէի մէջ հեռագրական կայարան մը հաստատելու որոշո մտըր-ուած է, և այս որոշումը վերջին օրե-րու Յունաց և Լատինացոց մէջ տեղի ունեցած դէպքերէն առաջ եղեր է :

— Պէրութի կառավարութեան քար-տուղար-թարգման Ասիմէրիատիա է-ֆէնտի քանի մ'օրէ 'ի վեր քաղաքս կը դա՛նուի :

— Ճէրիտէի Հովտախին ըսածին նայելով, քանի մը տարիէ 'ի վեր Եննի ճամբի քովը շինուած քարաշէն վա-ճառատունները քակուելով, անոնց ակեղ խան մը պիտի շինուի :

— Դանուր լրագրին ըսածին նայե-լով, Սաքս-Վէյմարի գահաժառանգ մեծ գուքը իրեն արժանաւոր պատ-ուով ընդունուեր է Ռուսուքի մէջ :

Հոն հասնելուն երկրորդ օրը քանի մը Ռուսմանիայի պաշտօնատարք Ռու-մանիական շոգենաւով մը եկեր են զինքն առնելու : Բայց Միացեալ-իշ-խանութեանց երկիրներէն եկած ամէն բան գտարանթիւայի դրուելու, ստիպ-եալ ըլլալով, Դանուրի յանձնաժողովը

փութացեր է իւր նաւերէն Նիշ նաւը մեծ գ.քսին յատկացնելու, որնոր կու-սակալին այցելու թիւնն ընդունելէ վեր-ջը նաւը մտեր է գիմայի կողմն անց-նելու համար : Զօրաց գումարտակ մը նաւամատոցին վրայ կեցած են եղեր մեծ գուքը պատուելու համար :

— Կիմանամք թէ կոստանդնուպո-լիս կեցող 'ի կոնիոյ բնակիչներէն մէկ քանին 'ի գիմայ իրենց հայրենակցած Յունաց Պատրիարքին բողոքագիր պի-տի տան եղեր գերապատիւ Ակաթօ-ղբոսին իկոնիոյ վիճակին առաջնորդ ընտրուելուն վրայ : Սոյն ընտրութիւնը չի պիտի ընդունին այս գաւառին Յոյ-ները որք, կըսուի թէ, կայսերական կառավարութեան պիտի դիմեն երբ Պատրիարքը իրենց պահանջմունքը բանի մը տեղ չի դնէ : Այս եպիսկոպո-սին վրայ եղած ամբաստանութեան վը-կայութիւնք, այս շարժում մէջ, Յու-նաց Ս. Պատրիարքին ուղղուած մէկ ա-ղերսագրին մէջ կան :

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Ղ Ո Ւ Բ Բ

Գ Ա Ղ Ղ Ի Ա

Վերայ 20 մայիս

Ստանանագրական օրինաց ծրագ-րին ընթերցումը, նոյնպէս Աղգային ժողովոյն լուծման ճիշտ ժամանակ մը որոշելու առաջարկութիւնը մերժուե-ցան Աղգային ժողովոյն մէջ : Վաղը ա-ջակողմեանք և աջակողմեան կեդրոնի անգամք հարձափորձ պիտի ընեն : Պաշտօնէից փոխլսմանց առթիւ կա-ռավարութիւնը կը յայտնէ, թէ պահ-պանողական հանրապետութեան մը պէտքն է պատճառ այդ փոփոխմանց : Պարտայի մէջ գիները ցած են :

Ի Տ Ա Լ Ի Ա

Հունիս 20 մայիս

Պ. Լանձա, Խորհրդարանին մէջ յիսուսեանց կարգին հաստատութեան ի նպաստ կը խօսի :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Պերլին 20 մայիս

Կը հաւաստեն թէ Գերմանական պորտաներու մէջ թեթեւ բարւոքում մը կայ : Աւստրիական արժեթուղթերն աւելի կը փնտռուին :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Հ Ր Ա Ի Ի Ր

ԱՌ Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ր. Ե. Ռ. Ե. Ս.

Մեծապատիւ երեսփոխ. էֆէնտիք Աղգային Ընդհանուր ժողովոյ ԿԲ. նիստը պիտի գումարի յառաջիկայ ուր-բաթ օր 11 մայիս 'ի Ս. Լուսաւորիչ ե-կեղեցին Ղալաթիոյ :

Ատեանը պիտի բացուի ժամը 6 ին և դոյուի 10 ին :

Կը հրաւիրեմ զաղգային երեսփո-խանս գալ աղգափրարար կատարել ի-րենց նախնական պարտաւորութիւնը :

5 մայիս 1873 Մնամ աղօթարար Ի Պատր. Հայոց ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ Կ. Պօլիս ԳԻՐՏԻՉ ԱՐՔ ԵՐԻՄԵԱՆ

ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՑ

1. Վաւերացուն նախորդ ԾԸ. ԾԹ. Կ. և ԿԼ. նստերու ատենագրութեանց :
2. Վաւերացում նորընտիր երեսփո-խանաց :
3. Վերանորոգուն 1/3 մասին Ընդհա-նուրժողովոյ :
4. Վերանորոգում Գիւանին Ընդհա-նուրժողովոյ :
5. Ատենական կանոնադրութիւն :

Ատենագիր Ընդհ. ժողովոյ Տէքն Ե. Մ. Մ. Մ. Մ.

Յունաց թէսթիս լրագրէն կը տե-ղեկանամք որ այս կիրակէ օր յոյն օրիորդի մի սիրահարած հայ երիտա-տարդ մի Բերայի հայոց Ս. Երրորդու-թեան եկեղեցին գիմեր է ամուսնա-նալու համար, բայց քահանայք նկա-տելով որ աղջիկը յոյն է, վերջին օրե-րըս Հայոց և Յունաց Պատրիարքարան-ներուն մէջ եղած դաշնագրութեան համաձայն հաճութիւն չեն տուեր : Սա-կայն այս մերժումը երիտասարդին միտքը չէ կրցած դարձնել, որնոր յոյն քահանայի մի երթալով և գումար մի տալով յաջողեր է ամուսնանալ Յոյն օ-րիորդին հետ :

Տեսնենք թէ արդեօք Յունաց Պատ-րիարքը իւր հրապարակաւ ըրած խոտ-ման համաձայն յիշեալ պատկազիր քահանայն պիտի պատժէ թէ ոչ. որ-պէս զի իրաւունք ունենամք մեր ը-նելիք գիտողութեան մէջ անաչառ և խիստ լինելու :

Երդնկայէն բաղմամբիւ ստորագ-րութեամբ հետեւեալ նամակը զըր-կուած է մեզ 'ի հրատարակութիւն :



# ԱՐԵՒԵԼ ԵԱՆ ՓՈՂ

## Խմբագրագետ Տէր:

Մամուլը 263 թիւ թերթը յերջնակա մուտ գտած վայրկեանին՝ զարմանալի կերպիւ չրջմոլիկ հրոյ պէս խումբ մը անձանց ճանկերուն մէջ կը տարուբերէր, որով ամենէն անտարբերն ալ հետաքրքիր լինելով թէ «արդեօք ի՞նչ է պարունակութիւնը» . զանի տեսնել կը փութայր, և արդարեւ տեսնելու արժան իսկ էր:

— 13 պարբերական ստորագրութեամբ ՚՚՚ նամակ մը:

Ատնք անունին ծածկող վատեր լինելին գիտնալով հանդերձ առանց ամաչելոյ՝ նախ արդարութեան և իրաւանց վայրկեանական ճնշումը և հուսկ ուրեմն անոնց մեծ ակոյեաններ լինելը ՚ի սրտէ վկայելով՝ (խեղճերը՝ դեռ նոր են գիտցեր) Սրբազան Աւետարանէն ալ վկայութիւն մը կը բերեն, որպէս զի Առաջնորդի ճիշդութեանութիւնը հաստատուն . բայց շատ ուշ են մնացել: Տեսնենք ի՞նչ է եղել յանցանքը:

Ա. Տէր Մանուէլը գանակոծեց և յանիրաւի արարեց, (Մամուլ Աբբատիազուր մոռցել է . լուսահողի փունջ անցեալ տարի այդպէս կը գանդալէր) — շատ ազէկ ըրաւ . ի՞նչ ընել պէտք էր պղերդ գիւնեմու և ամբարտաւան քահանայի մը:

Բ. Բարերգի ազգայնոց կրած բռնարարութիւնը ծածկեց Պատրիարքարանի ու շաղթա թեմէն — սակայն կարնոյ Գեր. Առաջնորդն ալ չգրեց . Երեմիա Կաթողիկոսը աչօք չտեսա՞ւ, հարիւաւոր ստորագրութեամբ լըրագիրք չձանաջի՞ն, թո՛ղ բազդատէ՛ Պատրիարքարանը: Առաջնորդը որ այն միջոցին հոս կը գտնուէր, սակայն սուրհանդակաւ գիշերայն վեց ժամէն Բարերգ չի՞սա՞ւ . դեռ չեղած՝ ՚ի Պօլիս չը հեռագրե՞ց . կարին չգնա՞ց . բայց ի՞նչ կըսեմք, անձրև ընողգայ ապառաժին ի՞նչ կ'ազդէ:

Քիչ մ'ալ յտնալ երթանք:

« Զայն (Բարերգի բռնարարութիւնը) թեթեւ իրողութիւն մը ներկայացուց Առաջնորդը, կըսէք . պատճառ, իր ազգայնաց քանի մը համախոհները կառավարական ատենանը բաղմնայնելոյ համար» ահաւասիկ փորերնուդ ցաւը . այսպիսի խօսելէն ի՞նչ շահ, ուղղակի պոյգ խօսէիք չէ՞ր լինէր, կ'ըլար . բայց ո՞վ պիտի կըլէր: Բարէ անմիա եռապետացը, միջին դարն է, հապա ազգին 54000ը կընողը նստեր հոն հապա խեղճ ժողովրդ-

եան անմատչելի նոր կռնոս մը դարձած խենդ Մարգարեանը նստեր հոն. հապա երեսփոխտնական աթոռոց վերայ՝ Տիմոթէոսի նկարած նուպէացւոց յար և նման բարոյից բարեխառն կըլինայէն իսպառ հեռի երկու եղբարքը նստէին . բաւական չէ՞ Չեզի, որ պատերազմին տարին բանակին հոս եղած ատենը՝ 4800 օխա յարդը խեղճ աղքատէն ժողովոյ և կըլելով կըլելով մինչ ցարդ որոճացող չորպաճին տակաւին կը նստի:

Գ. Հիւսէյն պէկի խնդիրը՝ այս մասին մենք ալ բացատրութիւն խնդրեցինք Առաջնորդէն, և որոյ պարզելուն համար ինքն ալ Պօլիս գընաց, մենք ալ Չեզ նման հետաքրքիր և ցանկացող եմք որ թէ այս և թէ չորպաճներու կերած ստակներուն հաշիւը տեսնուելով պարզուի ՚ի շինութիւն յուզեալ դաղափարաց:

### Շարունակէ

Քանի մի օրէ հետէ Եէնի-դափուի թաղական խորհրդոյ նկատմամբ ազգային լրագրաց սմանց մէջ դիտողութիւններ կը տեսնուին, որոնցմէ կը հասկցուի թէ՛ թաղ խորհրդոյ անդամոց մէջ միաբանութեան ոգի չկայ:

Առանց իրենց անմիաբանութեան պատճառները հոս քննել ելնելու, սա միայն դիտել կ'տամք թէ՛ արդարեւ զարմանալի թաղ մ'է այս, որոյ ո՛չ միայն ներկայ, այլ և նախորդ ամէն թաղ խորհրդոց մէջ իսկ գծուութիւնք և անհամաձայնութիւնք երբէք պակաս եղած չեն, և կերևի թէ յիշեալ թաղի թաղ խորհրդոց ունակութիւն եղած է զիրար թշնամանել և իրարու շինածըն աւերել:

... խմբագիր.

Պատիւ ունեմ ծանուցանել խնայ . Ընկերաց թէ ընկերութեան ապրիլ ամսոյ հաշիւը դոցուած և պաշտօնէից ամսականներն ալ ամբողջապէս վճարուած է:

Ի Դիմաց խնայ . Ընկերութեան  
Ատենապետ  
Տօբեց Ի-Ի-Տեան

1873 մայիս 8  
Քէպճի խան թիւ 2

Վասն ճշդութեան կատորագրեմք  
Հսկող ժողովականք  
Ս. Գրեգորեան Կարապետ Նասրոնեան

## ԸՆԹԱՑԻ ԴՐԱՄՈՑ

Օսմ . ոսկին 100 շրշ . Ի հաշուով  
Ղրշ:

Անգղ . ոսկի . . . . .	110
Գաղղ . . . . .	87
Բօլ . . . . .	89
Քրքմից . . . . .	51
Ճերմակ մէճիտ տարր . . . . .	101
Հինգնոց . . . . .	103
Մէթալիկ . . . . .	105
Պղինձ . . . . .	120

## ԸՆԹԱՑԻ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Ղալաթիա 10 մայ

Ընդհ . Պարտ . Արժ . բաց . . . . .	59
գոց . . . . .	59
բարձր գին . . . . .	59
ցած . . . . .	59
Սօսիթէ Ժէնէրալ Լ. Ս . . . . .	12
Գանձատուն 1872 ի . . . . .	90
Սօսիթէ Օթօման . . . . .	5
Պանք աը Բօնսթ . . . . .	7
Քրէտի Օսթրօ Թիւրք . . . . .	8
Քրէտի Ժէնէրալ Լ. Օ . . . . .	15
Պանք Վէրիսի . . . . .	-
Թրամկայ . . . . .	16
Բումէլիի Արժ . . . . .	174
Տր . . . . .	70
Փոխառ . 69 ի (անկորոն) . . . . .	315
. . . . .	380
. . . . .	570
Ըրբօր . . . . .	5
Դրամապեղչ . . . . .	0/13

## Ա Չ Դ

Արևելեան փող ձեռքէ ծախուել յատ կը ծախուի նաև Պահճէ-քափ Սուհի Մ. Պօղոս աղայի խանութը, կ'մըրջի գլխի պարագան, Պէշիկթալ Օրթագիւղի, Գուրուչէշիմէի, Բ. Հիւրի, Պէյգօղի, Մաքրրգիւղի, Գըն կղզիի տեղական թղթատարութեան կայանները:

Միջադիւղի ազգային Լսարանին մ Մեծապատիւ Տօրթէօն Եիշմանեա և Եուսուֆեան Մեծապատիւ Տիգրէֆէնտի ըրած սրտաշարժ և ազդատենախօսութիւնքն հրատարակու լինելով, կը ծախուին բոլոր գրավառ աաց քով ՚ի գին 40 վարայ:

ՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐ  
Կ.ԷՐՁԻՆԿԵԱՆԼԵԱՆ ԲԱՐՔՈՂ ՍՈՒՐ  
ՏՊԱԳՐ. Յ. ԳԱՅԱՅԵԱՆ ԵՒ ԸՆԿ. Յ. ՊԱՐՈՒ  
Կ. Պօղի Թիւրքի խան վարի յարկ թիւ 2